

Ս. ԳԵՂԱՐԴԱ ՎԱՆՔՈՒՄ ՏԱՐՈՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐ—ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

1985 թ. սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին հայ ժողովուրդը մեծ ցնծությամբ և ոգևորությամբ տոնեց իր սիրեցյալ Հայրապետի գահակալության բեղուն և արդյունավետ 30-ամյակը, արժանին մատուցելով՝ մեծարեց Մեծ և Շինարար տիտղոսներով: Այդ անցնող երեք տասնամյակների ընթացքում հսկա վերելք ապրեց Հայ Եկեղեցին իր հոգևոր, կազմակերպչական, մշակութային, առավել ևս կառուցողական կյանքով: Եվ ահա շինարարական նոր պտուղը՝ բացման և օրհնության հանդիսություններին պատրաստ է Ս. Գեղարդա վանքում կառուցված աղբյուր-հուշարձանը՝ նվիրված Տարոն աշխարհին և նրա հաղթական ոգուն՝ հրամանավ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի, արդյամբ և ծախյուք տարոնցի, այժմ Փարիզում բնակվող Մարտիկ Տակառյանի, և արդյունքը Հանրապետության նշանավոր ճարտարապետ Բաղդասար Արզումանյանի ստեղծագործ մտքի:

Առաջին անգամ տեսնողը կկարծի, թե այս հուշարձանը մի ամբողջական ժայռաբեկոր է, որը բնական տարերքի հետևանքով պոկվել է վանքը շրջապատող բարձրագագաթ ժայռերից և ընկել այդտեղ ու հայ հանճարի և արարող ձեռքի շնորհիվ մշակվել, դարձել Տարոնի հերոսական ոգու քարեղեն վկան: Իր նմանը չունեցող այս աղբյուր-հուշարձանը հատակագծում քառակուսի է՝ 2մ×2մ: Հյուսիսային և հարավային կողմերից ունի սեղանաձև և կամարակապ խորշեր, ուր տեղադրված են նրբաճաշակ և քանդակալարդ ցայտաղբյուրներ: Հարավային կողմի խորշում քանդակված արև խորհրդանշող վարդակի տակ վերեղված է աղբյուր-հուշարձանի շինարարական արձանագրությունը հետևյալ բովանդակությամբ.

Ի Հայրապետութեան Տ. Տ. Վազգէն Ա
Կաթողիկոսի կառուցաւ
Աղբիւր-Յուշարձանս,
Ի Յաւերժացումն Տարօնական Ոգւոյ,
Արդեամբ փարիզահայ
Մարտիկ Օհան Տակառեանի
Ի Խաչգիւղ գեղջէ Տարօնոյ:
:ՌՆԼԴ:

Արևմտյան կողմից հոսող աղբյուրի վերին կամարի տակ տեղադրված է Տարոնը և նրա հաղթական ոգին խորհրդանշող Արծվի բարձրաքանդակը: Բարձրաքանդակ Արծվի և թափվող աղբյուրի միջև վերեղված է «Ուխտ Մամիկոնեից» պատգամը՝ ուղղված գալիք հայ սերունդներին.

Քաջութեամբ մեռցուք
Ի վերայ Աշխարհիս մեր
Եւ ի վերայ Ազգիս մեր,
Եւ մի տեսցեն աչք մեր,
Կոխան ոտից պղծալից
Լեալ վսրբարանս մեր:

ՄԻ ՊԱՀ ԱՅԳԵՅՈՒՐ-ՀՈՒՐՇԻՐՇԱԽ ԵՒՅԱՐԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Այս հուշաղբյուրի շինարարությունը տևեց մեկ և կես տարի և կառուցված է հայկական ավնիվ ու ընտիր բազալտե որձաքարից: Աղբյուր-հուշարձանը իր կառուցվածքային ծավալով, տեղի և դիրքի ընտրությամբ ներդաշնակված է վանքի հնագույն պարսպին և Գեղարդի գեղատեսիլ կիրճին: Կառուցողական իր բարձր հորինվածքից բացի, ուշագրավ է և եզակի այս կոթողաղբյուրը այն առումով, որ գտնվում է Մայր Աթոռի և Վաղարշապատի սահմաններից դուրս՝ Գեղարդա վանքում, Հայաստանի հանրահռչակ ուխտավայրերից մեկում, ուր ամեն շաբաթ, կիրակի և տոն օրերին, Մայր հայրենիքի բազմաթիվ շրջաններից ուխտի են գալիս բազմաթիվ հայ հավատացյալներ:

Հուսիչ էր աղբյուրի բացման և օրհնության օրը՝ մայիսի 17-ը, հուսիչ ոչ միայն մեկենասի, գծագրող ճարտարապետի, կառուցող վարպետի, մեկ՝ Գեղարդա վանքի քահանաներիս, այլև բոլոր ներկա գտնվողների և հյուրերի համար: Կարելի է ասել, որ Գեղարդա վանք ուխտի եկող հավատացյալներն ու այցելուները նույնպես հետևել են այս աղբյուր-հուշարձանի կառուցման ընթացքին և սրտի թռիչքով ու հուզումներով սպասել այս նվիրական օրվան:

Այդ ուրախ առիթով վանք էին ժամանել բարերար պրն. Մարտիկ Տակառյանը, տարբեր երկրներից սփյուռքահայ ուխտավորներ և հայրենի մտավորականներ: Հանդիսավոր այս առիթով Մայր Աթոռից Ս. Գեղարդա վանք էին ժամանել Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը, Փարիզի հայոց առաջնորդ Տ. Գյուտ եպս. Նագգաշյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլապյանը, Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը, մի խումբ սարկավագներ և հոգևոր ճեմարանի ուսանողներ:

Ցերեկվա ժամը 12-ին, նախագահությամբ դիվանապետ սրբազանի, թափորը «Հրաշափառով», վանգերի քաղցրահնչյուն զողանջների ներքո, խուռներամ ուխտավորների ուղեկցությամբ առաջնորդվեց տաճար: Սուրբ խորանի առջև աղոթք-երկրպագությունից հետո, թափորը նույն հանդիսավորությամբ իջավ բակ, ուր և կառուցված է աղբյուր-հուշարձանը:

Նախագահող սրբազանի հանդիսավոր «Հայր մեր»-ից հետո, հոգևոր դասի կողմից երգվեց «Աղբիւր կենաց» շարականը: Եսայի մարգարեի և Ս. Ավետարանի հավուր պատշաճի ընթերցումներից հետո լավեց «Օրհնեսցի և սրբեսցի»-ն: «Ս. Խաչիւս» քարոզից առաջ նախագահող սրբազան հայրը հրավիրեց Գեղարդա վանքի վանահայր արժ. Տ. Եղիշե ավագ քհն. Սարգսյանին՝ ասելու իր խոսքը այս առիթով:

«Ի Հայրապետութեան Տ. Տ. Վազգէն Ա Կաթողիկոսի կառուցաւ Աղբիւր-Յուշարձանս ի յաւերժացումն Տարօնական ոգւոյ, արդեամբ փարիզահայ Մարտիկ Օհան Տակառեանի ի Խաչգիւղ գեղջէ Տարօնոյ»:

Գերաշնորհ, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր, մեծահարգ պրն. Տակառյան, հյուրեր և ներկաներ: Այսօր մենք հավաքվել ենք մեր աշխարհի բնության գեղատեսիլ այս անկյունում գտնվող միջնադարյան ուխտավայրերից մեկում՝ Ս. Գեղարդա վանքում, բացումը կատարելու այս գեղեցիկ աղբյուր-հուշարձանի՝ նվիրական Տարոն աշխարհի փառապանծ անցյալի հիշատակին: Հայաշունչ այս աղբյուր-հուշարձանը կերտված հայկական արևավառ բազալտով, կառուցվել է փարիզաբնակ հարգամեծար պրն. Մարտիկ-Օհան Տակառյանի նյութական միջոցներով: Ճարտարապետական փոքրածավալ և անթերի այս կառույցի նախագծողն է հայրենական տաղանդաշատ ճարտարապետ պրն. Բաղդասար Արզումանյանը, որին թույլ տվեք շնորհակալություն հայտնել այն ամենի համար, որ նա կատարեց ողջ շինարարության ընթացքում: Մոռանալով իր աշխատանքային ամենօրյա ծանրաբեռնվածությունը, հարգելի ճարտարապետը առանց պլանալու ժամանակ էր գտնում ի պահանջել հարկին այցելելու Ս. Գեղարդա վանք, մոտիկից հետևելու շինարարության ընթացքին: Շնորհակալություն նաև Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ պրն. Արծրուն Գալիկյանին, որը բացառիկ ջանասիրությամբ և երիտասարդական եռանդով հոգում էր շինարարական բոլոր կարիքները: Կուլենայի շնորհակալություն հայտնել նաև կառուցող վարպետ Երվանդին, որը շատ հաճախ գիշերային դրախտային լռության մեջ, միայնակ կանգնում էր կիսակառույց աղբյուրի առջև, մոլեռանդ հավատացյալի նման բարձրաձայն խոսում իր մուրճի հարվածներով ջունչ ու կենդանություն առնող գեղեցիկ այս կառույցի հետ:

Աղբյուր-հուշարձանների կառուցումը Հայաստանում նոր երևույթ չէ: Ամենահին ժամանակներից մեր ժողովուրդը պաշտամունք է ունեցել ջրի նկատմամբ: Դրա վորեղ ապացույցներից մեկն էլ Ս. Գեղարդա ժայռափոր տաճարներից մեկում առայսօր պահվող ջրի պաշտամունքի աղբյուրն է: Մեր ժողովուրդը անցյալում, ինչու չէ, նաև այսօր, պատմական հիշատակության արժանի դեպքի, կամ Հայրենիքի և մեր Ս. Եկեղեցու անկախության համար զոհվածների հիշատակի հավերժացման համար կանգնեցրել է

աղբյուր-հուշարձաններ: Հայաստանում այսօր կան 500 աղբյուր-հուշարձաններ, ամեն մեկը ուրույն ճարտարապետական հորինվածքով ու բովանդակությամբ:

Հարգելի պրն. Տակառյան, Ձեր գիտակցական նյութական վոհողությամբ կառուցված հուշաղբյուրը, հավերժական այս սրբավայրի կողքին, Ձեր ամբողջ կյանքում անհուն մխիթարության աղբյուր պիտի հանդիսանա Ձեզ համար, միշտ հիշեցնելով, որ հայրենի հողի վրա կառուցելով քարակերտ հուշարձան, նվիրված տարոնական անցյալի հերոսներին, կորցրած հայրենի օջախին և նահատակված հայրենակիցների հիշատակին, դրանով ոչ միայն շահել եք տարոնցիների և մեր ժողովրդի համակրանքը, այլև առատապես արժանացել Տիրոջ գթառատ օրհնությանը:

Նորին Սրբություն Վեհափառ Հայրապետը, 25 տարի առաջ Հայրենակցական միություններից մեկին հղած Հայրապետական Իր պատգամում, խոսելով բարեգործության և մեր ժողովրդի անցյալի հերոսների ու վոհերի հիշատակը ոգեկոչող կոթողի կառուցման մասին, շատ պատկերավոր ու գեղեցիկ բնորոշել է այն, սփյուռքահայ գրող Զավեն Սուրմելյանի մեկ արտահայտությամբ՝ «Մեռելներուս որպես խաչ ես այս ծառը տնկեցի»: Այո հարգելի պրն. Տակառյան, Ձեզ համար այսօր մեծ ուրախություն և մխիթարություն է: Տարիների Ձեր երազը, տնկելիք Ձեր ծառը, դարձավ հուշաղբյուր Հայրենիքում, վասպուրականցիների, Մուսա լեռան, սասունցիների և այլ հուշակոթողների կողքին: Թույլ տվեք հանդիսավորապես շնորհակալություն հայտնել Ձեզ Գեղարդա վանք ուխտի եկող բազմահազար հավատացյալների, այցելուների, մեր և աշխատակիցների անունից, որ նախաձեռնողը եղաք հայրենասիրական այսպիսի մի կոթողի կառուցման: Թո՛ղ հավիտյան հոսի սառնորակ այս աղբյուրը, հիշեցնելու բոլորին Տարոն աշխարհը ու նրա սքանչելի մարդկանց: Երանի նրանց, ովքեր իրենց լումայով հիշատակ են թողնում սրբություն դարձած մեր այս հողակտորի վրա՝ նպաստելով անցյալի, երազ դարձած հայրենական հիշատակների մարմնավորման, որոնք հայրենասիրական դաս պիտի հանդիսանան նոր սերունդների՝ մըշտապես նրանց հոգում ու գիտակցության մեջ արթուն պահելով երախտագիտության ու սիրո զգացումը մեր անցյալի, մեր սրբությունների և նվիրական անունների նկատմամբ: Բոլոր նրանք, ովքեր պատկերացնում են Մեծ Հայքի Տուրուբերան նահանգը, պիտի հաստատեն, որ գեղեցիկ այս լեռները ինչ-որ չափով հիշեցնում են Տարոն աշխարհը շրջապատող՝ Սասունի, Մանազկերտի, Խնուսի և Գրգուռ լեռները, որոնք այսօր, ավա՜ղ, ոտքի կոխան են օտարին: Սուրբ Մեսրոպից մինչև Ավարայր ու մինչև մեր դարի սկիզբը՝ Մեծ եղեռն, հայ ժողովրդի բոլոր վավակների հետ միասին տարոնցիները նույնպես գրչով ու վենքով, հանուն հայրենյաց և հավատքի կռվել ու պայքարել են բոլոր տեսակի թշնամիների, բիրտ ու դաժան ուժերի դեմ: 387 թ. Հայաստանի անարդար բաժանումից հետո, Մամիկոնյաններն էին, որ Հայոց քաղաքական ու կրոնական իշխանությանը հավատարիմ մնացին՝ Հայոց Արշակունի թագավորների թուլացած և կործանման եզրին գտնվող գահը պահպանելու: Տարոնի Մամիկոնյաններն էին, որոնց շուրջ համախմբվեցին հայրենասեր բոլոր ուժերը, 451 թ. Ավարայր իջնելու, մեր սրբական Հայրենին ու Եկեղեցին պաշտպանելու համար: Միայն անունների թվարկումը բավական է գլուխ խոնարհելու Տարոնի և տարոնցիների հիշատակի առջև. Սուրբ Մեսրոպ Մաշտոց, որի հանճարի շնորհիվ ազգայնացավ մեր Սուրբ Եկեղեցին ու մշակույթը, վերջնականապես ապահովվեց մեր ազգային գոյությունը այս արևի տակ, Տարոնի Մամիկոնյան զորավարները՝ Վասակ, Սամվել, Մուշեղ, Մանվել (Դ դար), Վարդան, Վահան, Կարմիր Վարդան (Ե դար), Դավիթ, Գրիգոր, Մուշեղ (Է—Ը դար):

Այս հուշարձան-աղբյուրի հիմքը դրվեց մեր ժողովրդի վանգվածային նահատակության 70-ամյա տարելիցին՝ 1985 թվականին, որպես «Յանմոռաց Յիշատակ Հայոց Տարօն աշխարհի փառապանծ անցեալն»: Այսօր գալիքին ենք հանձնում այս հուշակոթողը ի հիշատակ նաև բոլոր նրանց, ովքեր ազատաբաղձ ոգով անհավասար մարտերում ընկան թրքական յաթաղանից 1890—1915 թվականներին: Խունկ ու աղոթք նրանց արդար ու անմահ հիշատակին: Հպարտորեն կարող ենք ասել, որ Տարոնը պարտք չէ հայ ժողովրդին: Այդ չքնաղ աշխարհը մեր Սուրբ Եկեղեցուն, մշակույթին ու ազատագրական պայքարին տվեց շատ դեմքեր, որոնցով հպարտանում է մեր ժողովուրդը:

Մեր փոքրիկ Ածուն պատմական Եկեղեցիների, խաչքարերի և աղբյուր-հուշարձանների մի սուրբ աշխարհ է, որտեղ յուրաքանչյուր քարի վրա դրոշմվել են մեր ժողովրդի հոգու անկրկնելի գեղեցկությունները:

Այսօրվանից գալիքին ենք հանձնում գեղեցիկ այս հուշարձանը ևս, ի հավերժացումն տարոնական ոգու և ի վայելումն մեր ազգի և բոլոր այցելուների: Տասնյակ հա-

ԲԱՐԵՐԱՐ ՄԱՐՏԻԿ ՏԱԿԱՌՅԱՆԸ ԱՐՏԱՍԱՆՈՒՄ Է ԻՐ ՍՐՏԻ ԽՈՍՔԸ

կարավոր այն ուխտավորներն ու այցելուները, որոնք պիտի գան Ս. Գեղարդա վանք աղոթքի, պիտի խոնարհվեն սառնորակ աղբ:ուրից ջուր խմելու և երախտապարտ սրտով հիշելու Զեզ, պրն. Տակառյան: Հիշելու նաև Տարոն աշխարհը իր Մշո գեղեցիկ ու բերքառատ դաշտով, հռչակավոր Ս. Կարապետի, Ս. Հովհաննեսի, Առաքելոց, Ս. Աղբերկա պատմական շքեղ վանքերով:

Ուխտավոր և ճամփորդ, մշտապես խոնարհվի՛ր, խմի՛ր և վովացրու պապակ հոգիդ, պահելու համար ազգային ոգու կենսունակությունդ և ստեղծագործ վորությունը:

Թույլ տվեք, հանդիսավոր այս առիթով որդիական իմ շնորհակալությունս հայտնել Ազգիս Սրբազնագույն Հայրապետին՝ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառին, որի մտահղացման, հայրական օրհնության, նյութական և բարոյական օգնության շնորհիվ հնարավոր եղավ տեսնել այս գեղեցիկ աղբյուրը: Աղոթենք, որ տիեզերքի Արարիչը մեր Ազգի և մեր Ս. Եկեղեցու համար երկար և առողջ կյանք պարգևի ծերունապարդ, իմաստուն և շինարար մեր Հայրապետին, որի կյանքի գերագույն նպատակն է մեր Ս. Եկեղեցու, ազգի ու Հայրենիքի բարգավաճումը»:

Ապա մեծ հուզումով իր սրտի խոսքն ասաց հարգելի բարերարը՝ պարոն Մարտիկ-Օհան Տակառյանը.

«Գերաշնորհ սրբազան հայրեր,

Ազնիվ հայրենակիցներ և սիրելի Տարոնցիներ,

Հավաքված ենք այսօր Գեղարդա հնամյա վանքի հովանիին տակ, մեր ամենեն ոգեշնչող վայրերեն մեկուն մեջ, ուր հայուն կենդանի, հրաշածին հավատքը հաջողեր է ժայռերը փորել՝ անոնց ամրափակ, անխորտակ գոյությանը հանձնելու համար իր սրբությունները:

Մենք ալ այսօր կուզենք պանծացնել հիշատակը Տարոնի Աշխարհին՝ մեր նախահայրերու նվիրական գավառին, որ դարերով պաշտեր էր Անահիտը, Վահագնը և Աստղիկը, հայ ազգին ամենեն թանկագին առաքինություններուն՝ զգաստության, քաջության և մաքուր սիրո խորհրդանշանները: Բայց երբ Աստվածորդվույն իմանալի լույսը շողաց հայոց աշխարհի վրայ, Տարոն հաղորդվեցավ, պայծառացավ այդ լույսով և իր սրտին վրա սեղմեց մասունքը Հովհաննու Կարապետին և անոր ի պատիվ կառուցեց Հայաստանի ամենեն փառավոր տաճարներեն մին՝ Ս. Կարապետի վանքը, որ եղավ ուխտատեղի, դպրեվանք և պարփակեց բազմաթիվ վեհոգի Մամիկոնյաներու դամբարանները:

Անոր դեմ կանգնած է Առաքելոց վանքը, ուր կիանգչին Մովսես Խորենացի, Ղազար Փարպեցի, Դավիթ Անհաղթ, թարգմանիչներ և մատենագիրներ, նաև Աշտիշատը, ուր ամփոփված են Սուրբ Սահակ Պարթևի և քաջն Վարդանի դստեր՝ Շուշանիկի աճյունները:

Հայ դպրությունը Տարոնի կպարտի իր ամենամեծ դեմքերեն, Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթև, Խորենացի, Եղիշե, Փարպեցի, Զենոբ Գլակ, Հովհան Մամիկոնյան և բազմաթիվ մատենագիրներ, գրիչներ, ծաղկողներ: Տարոնն է նաև, որ իր ազգին նվիրած է շքեղ հույլը հերոս Մամիկոնյաններու:

Տարոնցին միշտ եղած է անխարդախ հայ, ջերմ հայրենասեր, միշտ պատրաստ զոհելու ինքզինքը իր հայրենիքին, իր ազգին համար նկատված է, որ Հայաստանի մեծ գավառներեն միայն Տարոնն է, որ թագավորություն չէ դարձած, հակառակ որ ամենեն ավելի ուժն ուներ, և ինք տված էր հայոց ամենեն մեծ սպարապետը, որովհետև Տարոն տեղական փառքի հետամուտ չէր երբեք, այլ միշտ ուզած է միացնել ու զորացնել իր տառապած և բաժանյալ ազգը:

Հայոց գողգոթայի տարիներուն՝ 19-րդ դարու վերջավորութենեն մինչև 1915-ի Եղեռնի թվականը, Տարոնը իր ծոցեն հանեց մեծ թիվով հերոս մարտիկներ, իրենց կյանքը հայրենիքին նվիրած կտրիճներ, ֆիդայիններ, որ կռվեցան արիաբար, միշտ բարձր պահելու հայուն անունը և պատիվը: Միայն Սասունի լեռներուն մեջ յոթ ամիս դիմադրեցին՝ գրեթե առանց պաշարի և միայն թշնամիեն գրավված զենքերով: Եվ Տարոնի մարտիրոսությունը իր հերոսության չափ մեծ եղավ և միայն 60.000 հոգի կրցան փրկվիլ, որոնց մեծ մասը ապաստան գտավ Մայր Հայրենիք և իրենց բազուկը տրամադրեցին ներկա Հայաստանի հառաջդիմության, իսկ մնացյալները ցրվեցան ի սփյուռս աշխարհի և ապրեցան ու կապրին տակավին իրենց չքնաղ ծննդավայրին կարոտով և վշտով:

Եվ այսօր ի՞նչ մնաց Տարոն Տուրուբերանի հին փառքեն, շեն քաղաքներեն և գյուղերեն, թերևս միայն իր լուսաղբյուրներեն մեկ քանին, մանավանդ այն, որ կշրվեժեր Ս. Կարապետի վանքին այնքան մոտ:

Այդ վերհուշն է, որ մեզ մղեց Մայր Հայրենիքի հողին վրա աղբյուր-հուշարձանով մը հավերժացնելու ոգեղեն հիշատակը լուսագեղ և ջրառատ հայադրոշմ Տարոնին:

Եվ ահա այսօր, այս աղբյուր-հուշարձանի

կառուցումով տարոնցիներս շատ ուրախ եղանք և ուրախ պիտի ըլլա նաև ամբողջ հայ ժողովուրդը, քանզի Տարոն Աշխարհը միայն մշեցիի, տարոնցիի աշխարհը չէ, քանի որ անոր պատմությունը միաձուլված է հայոց ամբողջ պատմության հետ, այս հուշարձանը ամբողջ հայությանը պիտի պատկանի և ըստ այնմ դարե դար պիտի հիշվի:

Այս առթիվ որդիական ակնածանքով և երախտագիտությամբ մեր ջերմ շնորհակալությունը կհայտնենք Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ Վազգեն Ա ՇԻՆԱՐԱՐ կաթողիկոսին, իր ընծայած բարոյական բարձր աջակցության համար, նաև շնորհակալություն ու գնահատանք բոլոր անոնց, որոնք կերտեցին այս տարոնաշունչ հիշատակարանը»:

Ապա խոսք առավ Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես եպս. Պոլպալյանը.

«Ինձ համար հոգեկան ուրախության գեղեցիկ մի առիթ է այսօր, սիրելի տարոնցիներ, բերելու ձեզ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի օրհնությունը այս պահին: Դժբախտաբար Վեհափառ Հայրապետը չկարողացավ անձամբ ներկա լինել և օրհնել Տարոնի այս փառավոր աղբյուր-հուշարձանը: Բայց վստահ եղեք, հոգով, սրտով, թե մտածումով, Հայոց Հայրապետը այս պահին մեզ հետ է, հոգևին հրճվում և փառք է տալիս Աստծուն, որ երբեմնի հայահոծ և փառավոր պատմություն ունեցող Տարոնը մոռացության չի տրվել, այլ թևատարած արծվի խորհրդավոր կերպարանքով եկել է բազմելու այստեղ՝ դարավոր Գեղարդա վանքի կողքին կառուցված հուշարձանի վրա: Այդ արծիվը 1915 թվականի մեծ Եղեռնի օրերին, իր զավակների հետ աքսորվեց, բարձրացավ երկինք, չվեց դեպի հայրենի այս եզերքը ապատ ճախրելու համար թթերի մեջ: Նրա զավակների ճակատագիրը եղավ իր ճակատագիրը: Եվ այսօր այդ արծիվը թևածում է Հայաստանի լեռների և հատկապես արծվաբներով հարուստ ա՛յս լեռների վրա, իբրև խորհրդանիշ Տարոնո Արծվին, որ նրա եղբայրն էր ու նրա հարազատը: Եվ այդ արծիվը կենդանի պիտի մնա այս հուշաղբյուրից հոսող զուլալ ջրի նման:

Ահա այսպիսի զգացումով ամեն մեկ հայ պիտի գա խմելու այս աղբյուր-հուշարձանի ջրից՝ Աստուծո օրհնությունը ստանալու և հայրենասիրությամբ լցվելու համար: Հայը աշխարհի որ մասում էլ ապրելիս լինի, նույն արմատից է, նույն ժողովրդի, նույն պատմության, նույն ավանդության և նույն մշակույթի ժառանգորդն է: Եվ նա կարող է ապրել ու գոյատևել՝ հավատարիմ և կապված մնալով միայն իր հայրենիքին, իր անցյալին, իր մշակույթին և պայծառ պահելով իր նահատակների հիշատակը:

Կեցցեն տարոնցիք: Եվ թող Աստված օրհնի ձեզ, որ չեք մոռացել ձեր անցյալը և Տարոնի արծիվը: Այդ զգացումը թող տակավին երկար հոսի ձեր երակների մեջ որպես կենսահորդ ավիշ, նույն զգացումով և նույն ոգով սնելու, մեծացնելու ու դաստիարակելու համար ձեր զավակներին, որպեսզի նրանք ևս, իրենց հայրերի օրինակով, գան խմելու այս կենարար ջրից, հոգեպես վերանորոգվելու և զորանալու:

Թող Աստուծո օրհնությունը լինի ձեր, մեր և բոլորիս վրա այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն»:

Ներկաները մեծ ուշադրությամբ և սրտի հուզումով հետևում էին հանդիսավոր արարողությանը: Աղբյուր-հուշարձանի բացման հանդիսությունը իր լրումին հասցրեց հոգևոր ճեմարանի սաների երգած «Զարթիր, լաո» հայրենասիրական երգը, որը ծնունդ է առել դեռ անցյալ դարի վերջերին, հայ ժողովրդի ազատագրական պայքարի օրերին՝ ընդդեմ սուլթանական բռնությունների: Հերոսական երգը դարձավ հուզական գերագույն պահ:

Արարողությունն ավարտվեց: Խնկի բույրն ու եկեղեցական երգեցողությունը տիրապես ծավալվել էին պաղ օդի մեջ: Մարդիկ մոտեցան, խունարհվեցին և շրթունքները հպեցին աղբյուրին: Օրվա խորհուրդը եզրափակվեց Ս. Գեղարդա վանքի միաբանական սեղանատանը՝ վանահոր տված պաշտոնական ճաշով, որի ընթացքում առաջարկվեցին Ամենայն Հայոց Հայրապետի, **Հայ Ազգի, վերածնված Մայր Հայրենիքի** կենացները:

Նորին Սուրբ Օծությունը բարձր գնահատելով պարոն Տակառյանի գործունությունը, ընդունեց առատաձեռն բարերարին, տվեց Իր օրհնությունը և հանդիսավոր պայմաններում կարդարեց նրա կուրծքը Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանով:

ՊԵՏՐՈՍ ՔՀՆ. ՄԱԼՅԱՆ
Ս. Գեղարդա վանք